Արդարադատություն և ներքին գործեր

1. Դատական համագործակցություն

1.1. Քաղաքացիական գործերով դատական համագործակցություն

Ներածություն

ԵՄ օրենսդրության քաղաքացիական գործերով դատական համագործակցության բնագավառը ներառում է քաղաքացիական և առևտրային գործերով ընդդատության, վճիռների ճանաչման և կատարման, կիրառվող օրենքի, ամուսնական և ծնողական պատասխանատվության հետ կապված գործերով ընդդատության, վճիռների ճանաչման և կատարման, քաղաքացիական և առևտրային գործերով վեճերի այլընտրանքային լուծման, անվճարունակության, քաղաքացիական կամ առևտրային գործերով դատական կամ արտադատական փաստաթղթերի հետ կապված ծառայությունների, քաղաքացիական և առևտրային գործերով ապացույցների ներգրավման ոլորտում պետությունների դատարանների միջև համագործակցության, իրավական օգնության ոլորտներում ծագող հարաբերությունների կարգավորումը: Այս հարաբերությունները Հայաստանի Հանրապետությունում կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով[1], ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով[2], «Միջնորդ դատարանների և միջնորդ դատավարության մասին»[3], «Անվճարունակության (սնանկության) մասին»[4], «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին»[5] ՀՀ օրենքներով և մի շարք այլ իրավական ակտերով:

Բացակայում են նաև կիրառվող իրավունքի վերաբերյալ մի շարք դրույթներ: ՀՀ օրենսդրությունը մասնավորապես չի կարգավորում կիրառվող իրավունքի առանձնահատկությունները՝ կապված իրավահարաբերության այս կամ այն տեսակից:

ՀՀ օրենսդրությունը չի նախատեսում նաև Եվրամիության օրենսդրությամբ նախատեսված քաղաքացիական և առևտրային գործերով դատական և արտադատական փաստաթղթերի հետ կապված ծառայությունների և միջազգային վեճերի դեպքում իրավական օգնության համարժեք մեխանիզմներ:

2007 թվական

Դատական համագործակցության բնագավառում ՀՀ օրենսդրությունը կհամապատասխանեցվի «Քաղաքացիական և առևտրային գործերով վեճերի այլընտրանքային լուծման մասին» Կանաչ փաստաթղթին, 1980թ. հունիսի 19-ին Հռոմում ստորագրության համար ներկայացված կոնվենցիային, Խորհրդի 2000թ. մայիսի 29-ի թիվ 1348/2000 կանոնակարգին, Խորհրդի 2000թ. մայիսի 29-ի թիվ 1346/2000 կանոնակարգին[6]:

Հաշվի առնելով քաղաքացիական գործերով վեճերի այլընտրանքային լուծման կարևորությունը՝ համապատասխան փոփոխություններ կկատարվեն «Միջնորդ դատարանների և միջնորդ դատավարության մասին» ՀՀ օրենքում: Այդ առնչությամբ մի շարք փոփոխություններ և լրացումներ կատարվեն նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ քաղաքացիական գործերով կիրառվող իրավունքի ոլորտում ՀՀ օրենսդրությունը չի համապատասխանում Եվրամիության պահանջներին, կկատարվեն մի շարք փոփոխություններ և լրացումներ ՀՀ քաղաքացիական և ՀՀ աշխատանքային օրենսգրքերում: Մասնավորապես, պետք է ուշադրություն դարձվի այն հանգամանքին, որ կախված իրավահարաբերության առանձնահատկությունից Եվրամիության օրենսդրությունը նախատեսում է առանձնահատուկ կարգավորում:

Կարևորելով պետությունների միջև առևտրային կամ քաղաքացիական գործերով դատական կամ արտադատական փաստաթղթերի շրջանառությունը՝ մի շարք փոփոխություններ և լրացումներ կկատարվեն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում:

Հիմք ընդունելով Եվրամիության օրենսդրությամբ նախատեսված անվճարունակության վարույթի առանձնահատկությունները՝ «Անվճարունակության (սնանկության) մասին» ՀՀ օրենքում կկատարվեն համապատասխան փոփոխություններ և լրացումներ: Փոփոխությունները հատկապես

---

[1] ՀՕ-239, 05.05.1998թ.:
[2] ՀՕ-247, 17.06.1998թ.:
[3] ՀՕ-219, 05.05.1998թ.:
[4] ՀՕ-17, 17.12.2003թ.:
[5] ՀՕ-221, 05.05.1998թ.:
[6] 1980թ. հունիսի 19-ին Հռոմում ստորագրության համար ներկայացված «Պայմանագրային պարտավորությունների բնագավառում կիրառվող իրավունքի մասին» կոնվենցիա, 2000թ. մայիսի 29-ի Խորհրդի կանոնակարգ թիվ 1348/2000՝ «Առևտրային կամ քաղաքացիական գործերով դատական կամ արտադատական փաստաթղթերի հետ կապված անդամ պետությունների ծառայությունների մասին», 2000թ. մայիսի 29-ի Խորհրդի կանոնակարգ թիվ 1346/2000՝ «Անվճարունակության վարույթի մասին»:

կարևոր են այն դեպքերի համար, երբ տարբեր պետություններում գործունեություն իրականացնող ֆիզիկական կամ իրավաբանական անձինք գտնվում են անվճարունակության վարույթում:

2008 թվական

Դատական համագործակցության ոլորտում համապատասխանեցման առարկա են Խորհրդի 2000թ. դեկտեմբերի 22-ի թիվ 44/2001 կանոնակարգը և Խորհրդի 2001թ. մայիսի 28-ի թիվ 1206/2001 կանոնակարգը[7]:

Հատուկ ուշադրություն պետք է դարձվի քաղաքացիական և առևտրային գործերով ընդդատության, վճիռների ճանաչման և կատարման խնդրին՝ հաշվի առնելով, որ ԵՄ օրենսդրությունը նախատեսում է վճիռների ճանաչման և կատարման ավելի կանոնակարգված և դյուրին մեխանիզմներ, որոնք հնարավորություն են տալիս քաղաքացուն դիմելու դատարան՝ այլ պետության դատարանում իր նկատմամբ կայացված վճռի ճանաչման և կատարման համար: Այդ իսկ նպատակով փոփոխություններ և լրացումներ կկատարվեն ՀՀ քաղաքացիական օրենսգրքում, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում, ինչպես նաև «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում:

Անհրաժեշտ փոփոխություններ կկատարվեն նաև քաղաքացիական, մասնավորպես՝ առևտրային գործերի կարգավորման վերաբերյալ օրենսդրության մեջ՝ նշված գործերով ապացույցներ ձեռք բերելու ընթացակարգերը հստակեցնելու առումով: Մասնավորապես, փոփոխություններ և լրացումներ կկատարվեն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում:

2009 թվական

Դատական համագործակցության բնագավառում ՀՀ օրենսդրությունը կհամապատասխանեցվի Խորհրդի 2003թ. հունվարի 27-ի թիվ 2002/8 դիրեկտիվին և Խորհրդի 2003թ. նոյեմբերի 27-ի թիվ 2201/2003 կանոնակարգին[8]:

Կարևորելով միջազգային վեճերի դեպքում իրավական օգնության մատչելիությունը՝ անհրաժեշտ փոփոխություններ և լրացումներ կկատարվեն «Փաստաբանության մասին» և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքներում:

Առանձին ուշադրություն պետք է դարձվի նաև ամուսնական գործերով և ծնողական պատասխանատվության հետ կապված գործերով ընդդատության, վճիռների ճանաչման և կատարման ոլորտին: ԵՄ օրենսդրությունը, հիմնվելով վճիռների ճանաչման և կատարման ընդհանուր կարգի վրա, սահմանում է մի շարք հատուկ նորմեր՝ կապված տվյալ իրավահարաբերության առանձնահատկությունից և սոցիալական նշանակությունից: Այդ կապակցությամբ մի շարք փոփոխություններ և լրացումներ կկատարվեն «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում:

---

[7] 2000թ. դեկտեմբերի 22-ի Խորհրդի կանոնակարգ թիվ 44/2001՝ «Քաղաքացիական և առևտրային գործերով ընդդատության, վճիռների ճանաչման և կատարման մասին», 2001թ. մայիսի 28-ի Խորհրդի կանոնակարգ թիվ 1206/2001՝ «Քաղաքացիական և առևտրային գործերով ապացույցներ ձեռք բերելու բնագավառում անդամ պետությունների դատարանների միջև համագործակցության մասին»:

[8], 2003թ. հունվարի 27-ի Խորհրդի դիրեկտիվ թիվ 2002/8՝ «Իրավական օգնության նվազագույն ընդհանուր կանոնների սահմանման միջոցով միջազգային վեճերի դեպքում արդարադատության մատչելիության բարելավման մասին», 2003թ. նոյեմբերի 27-ի Խորհրդի կանոնակարգ թիվ 2201/2003՝ «Ամուսնական գործերով և ծնողական պատասխանատվության գործերով ընդդատության, վճիռների ճանաչման և կատարման, ինչպես նաև թիվ 1347/2000 կանոնակարգն ուժը կորցրած ճանաչելու մասին»:

1.1.1 Օրենսդրական համապատասխանեցում

0	1	2	3	4	5	6
NN ը/կ	Միջոցառում	ԵՄ իրավական աղբյուր	Պատասխանատու մարմին	Ներկայացման ժամկետ	Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր)	Տեխնիկական աջակցություն
			2007			
1.	• ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում • ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում • ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում	«1980թ. հունիսի 19-ին Հռոմում ստորագրության համար ներկայացված պայմանագրային պարտավորությունների բնագավառում կիրառվող իրավունքի մասին» կոնվենցիա	ՀՀ արդարադատության նախարարություն	2-րդ եռամսյակ	40	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
2.	• ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում	2000թ. մայիսի 29-ի «Առևտրային կամ քաղաքացիական գործերով դատական կամ արտադատական փաստաթղթերի հետ կապված անդամ պետությունների ծառայությունների մասին » Խորհրդի թիվ 1348/2000 կանոնակարգ	ՀՀ արդարադատության նախարարություն (ՀՀ արտաքին գործերի նախարարության մասնակցությամբ)	3-րդ եռասյակ	42	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
3.	• «Անվճարունակության (սնանկության) մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում	2000թ. մայիսի 29-ի «Անվճարունակության վարույթի մասին» Խորհրդի թիվ 1346/2000 կանոնակարգ	ՀՀ արդարադատության նախարարություն (ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության մասնակցությամբ)	4-րդ եռամսյակ	44	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
		ԸՆԴԱՄԵՆԸ			126	
			2008			
4.	• ՀՀ քաղաքացիական	2000թ. դեկտեմբերի 22-ի	ՀՀ արդարադատության	2-րդ եռամսյակ	83	Խորհրդատվություն, նախնական

	դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում • «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում	«Քաղաքացիական և առևտրային գործերով ընդդատության, վճիռների ճանաչման և կատարման մասին» Խորհրդի թիվ 44/2001 կանոնակարգ	նախարարություն			փորձաքննություն
5.	• ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում	2001թ. մայիսի 28-ի «Քաղաքացիական և առևտրային գործերով ապացույցներ ձեռք բերելու բնագավառում անդամ պետությունների դատարանների միջև համագործակցության մասին» Խորհրդի թիվ 1206/2001 կանոնակարգ	ՀՀ արդարադատության նախարարություն (ՀՀ արտաքին գործերի նախարարության մասնակցությամբ)	4-րդ եռամսյակ	30	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
ԸՆԴԱՄԵՆԸ					**113**	
2009						
6.	• « Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում • «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում	2003թ. հունվարի 27-ի «Իրավական օգնության նվազագույն ընդհանուր կանոնների սահմանման միջոցով միջազգային վեճերի դեպքում արդարադատության մատչելիության բարելավման մասին» Խորհրդի թիվ 2002/8 դիրեկտիվ	ՀՀ արդարադատության նախարարություն (ՀՀ արտաքին գործերրի նախարարության մասնակցությամբ)	1-ին եռամսյակ	30	Խորհրդատվություն
7.	• «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում • ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենի նախագծի մշակում	2003թ. նոյեմբերի 27-ի «Ամուսնական գործերով և ծնողական պատասխանատվության գործերով ընդդատության, վճիռների ճանաչման և կատարման, ինչպես նաև թիվ 1347/2000 կանոնակարգն ուժը կորցրած ճանաչելու մասին» Խորհրդի թիվ 2201/2003	ՀՀ արդարադատության նախարարություն (ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն)	2-րդ եռամսյակ	100	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն

		կանոնակարգ				
ԸՆԴԱՄԵՆԸ					130	
ԸՆԴԱՄԵՆԸ					369	

1.1.2 Ինստիտուցիոնալ կարողություններ

0	1	2	3	4
NN ը/կ	Հաստատություն	Վերակազմակերպում	Վերապատրաստման կարիքներ	Տեխնիկական աջակցության կարիքներ
1.	ՀՀ արդարադատության նախարարություն	-	Միջազգային արբիտրաժի մասին դասընթացներ (10 օր/2007թ.)	Խորհրդատվություն
2.	ՀՀ արդարադատության նախարարություն (ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ դատարանների նախագահների խորհուրդ)	-	Անվճարունակության վարույթների մասին դասընթաց (10 օր/2007թ.)	Խորհրդատվություն
3.	ՀՀ արդարադատության նախարարություն (ՀՀ դատարանների նախագահների խորհուրդ)	-	Քաղաքացիական գործերով միջդատական համագործակցության մասին դասընթաց (15 օր/ 2008թ.)	Խորհրդատվություն
4.	ՀՀ արդարադատության նախարարություն (ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ դատարանների նախագահների խորհուրդ)	-	Ամուսնական գործերով և ծնողական պատասխանատվության հետ կապված գործերով ընդդատության, վճիռների ճանաչման և կատարման մասին դասընթաց (15 օր/2009թ.)	Խորհրդատվություն

1.1.3.Քաղաքականություն

0	1	2	3	4	5	6
NN ը/կ	Միջոցառում	ԵՄ իրավական աղբյուր	Պատասխանատու մարմին	Ներկայացման ժամկետ	Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր)	Տեխնիկական աջակցություն
2007						
1.	• « Միջնորդ դատարանների և միջնորդ դատավարության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում • ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում	«Քաղաքացիական և առևտրային գործերով վեճերի այլընտրանքային լուծման մասին» Կանաչ փաստաթուղթ	ՀՀ արդարադատության նախարարություն	1-ին եռամսյակ	15	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
ԸՆԴԱՄԵՆԸ					15	

1.2 Անվտանգության տարածաշրջան

Այս բնագավառում ՀՀ օրենսդրությունը հիմնականում չի համապատասխանում Եվրամիության օրենսդրությանը: Բացառություն է կազմում միայն ահաբեկչության և հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման դեմ պայքարի բնագավառը, որն օրենսդրորոեն կարգավորված է: Այնուամենայնիվ, այս ոլորտում ևս առկա է համապատասխանեցման խնդիր:

«Անվտանգության տարածաշրջան» բաժնում ԵՄ օրենսդրությունը հիմնականում վերաբերում է որոշ կառույցների հիմնադրմանը: Այդ կառույցներն են խարդախության դեմ պայքարի գրասենյակը, թմրանյութերի և թմրամոլության մոնիտորինգի գրասենյակը, պայմանական դատական համագործակցության միությունը, ինչպես նաև հանցագործությունների կանխման ցանցը: Այս բնագավառում Եվրամիության օրենսդրությունը անդրադառնում է նաև ձերբակալման եվրոպական օրդերի և դրա հանձնման միասնական ընթացակարգի, կազմակերպված հանցավորության դեմ պայքարի համակողմանի ռազմավարության հաստատման, անհայտ կամ սեռական շահագործման ենթարկվող երեխաների հայտնաբերման գործում քաղաքացիական հասարակության ներդրման և ահաբեկչական խմբերի ֆինանսավորման դեմ պայքարի իրավական ինստիտուտներին: Համեմատական վերլուծության արդյունքները վկայում են, որ ՀՀ օրենսդրությունը միայն կարգավորում է ահաբեկչական խմբերի ֆինանսավորման դեմ պայքարի բնագավառում ծագող իրավահարաբերությունները: Ներկայումս գործում է «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքը[9]:

2006 թվական

«Անվտանգության տարածաշրջան» բաժնում ՀՀ օրենսդրությունը կհամապատասխանեցվի Խորհրդի 1999թ. դեկտեմբերի 9-ի թիվ 1999/C 373/01 առաջարկությանը [10]:

Ահաբեկչական խմբերի ֆինանսավորման դեմ պայքարի բնագավառում անհրաժեշտ է օրենսդրորոն սահմանել արդյունավետ մեխանիզմներ՝ պայքարն ավելի առարկայական դարձնելու համար: Մասնավորապես, փոփոխություններ և լրացումներ կկատարվեն «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում:

2007 թվական

ՀՀ օրենսդրությունը կհամապատասխանեցվի անվտանգության տարածաշրջանի բնագավառի Խորհրդի 1998թ. դեկտեմբերի 21-ի թիվ 98/C 408/01 բանաձևին[11]:

Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի կանոնակարգման առնչությամբ կմշակվի «Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագիծ:

2008 թվական

ՀՀ օրենսդրությունը կհամապատասխանեցվի անվտանգության տարածաշրջանի բնագավառի Խորհրդի 1998թ. դեկտեմբերի 21-ի թիվ 98/C 408/01 ռեզոլյուցիային Խորհրդի 2001թ. մայիսի 28-ի թիվ 2001/419/JHA որոշմանը, 2001թ. թիվ 2001/C283/01 ռեզոլյուցիային[12]:

ՀՀ օրենսդրությունը վերահսկվող նյութերի նմուշների փոխանցման բնագավառում պետք է համալրվի մի շարք իրավական նորմերով: Այսպես, համապատասխան լրացումներ և փոփոխություններ կկատարվեն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում, որպեսզի լուծվեն վերահսկվող նյութերի նմուշների փոխանցման կարգը սահմանելու հետ կապված հարցերը:

Երեխաների իրավունքների պաշտպանության համար անհրաժեշտ են նոր մեխանիզմներ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այս բնագավառի ՀՀ օրենսդրությունը որևէ իրավական նորմ չի նախատեսում, այդ մեխանիզմները կսահմանվեն «Անհայտ կամ սեռական շահագործման ենթարկվող

---

[9] ՀՕ-13, 14.12.2004թ.:

[10] 1999թ. դեկտեմբերի 9-ի Խորհրդի առաջարկություն (1999/C 373/01)՝ «Ահաբեկչական խմբերի ֆինանսավորման դեմ պայքարի բնագավառում համագործակցության մասին»:

[11] 1998թ. դեկտեմբերի 21-ի Խորհրդի բանաձև (98/C 408/01)՝ «Կազմակերպված հանցավորությունը՝ վերջինիս դեմ պայքարի համակողմանի ռազմավարություն հաստատելու միջոցով կանխելու մասին»:

[12] 2001թ. մայիսի 28-ի Խորհրդի որոշում թիվ 2001/419/JHA՝ «Վերահսկվող նյութերի նմուշների փոխանցման մասին», 2001թ. Խորհրդի ռեզոլյուցիա թիվ 2001/C283/01՝ «Անհայտ կամ սեռական շահագործման ենթարկվող երեխաների հայտնաբերման գործընթացում քաղաքացիական հասարակության մասնակցության մասին»:

երեխաների հայտնաբերման գործում քաղաքացիական հասարակության մասնակցության մասին» ՀՀ կառավարության որոշմամբ:

2009 թվական

ՀՀ օրենսդրությունը կհամապատասխանեցվի հետևյալ իրավական ակտերին՝

- Խորհրդի 2001թ. մայիսի 28-ի թիվ 2001/427/JHA որոշում[13],
- Հանձնաժողովի 1999թ. ապրիլի 28-ի որոշում[14],
- Խորհրդի 2002թ. հունիսի 13-ի թիվ 2002/584/JHA հիմնարար որոշում[15],
- Խորհրդի 1993թ. փետրվարի 8-ի թիվ 302/93 կանոնակարգ[16],
- Խորհրդի 2000թ. դեկտեմբերի 14-ի որոշում[17]:

Պետք է նշել, որ բոլոր այս ակտերը ենթադրում են որոշակի մարմինների հիմնադրում: Ելնելով ինստիտուցիոնալ և ֆինանսական որոշ խնդիրներից՝ նշված ակտերը նպատակահարմար է համապատասխանեցնել 2009 թվականին:

Առանձնակի ուշադրություն պետք է դարձնել նաև հանցագործությունների կանխման համակարգին: Այդ պատճառով կմշակվի «Հանցագործությունների կանխման ցանց ստեղծելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

Հաշվի առնելով խարդախությունների դեմ պայքարի արդյունավետ ընթացակարգերի սահմանման անհրաժեշտությունը՝ կմշակվի «Խարդախությունների դեմ պայքարի գրասենյակի հիմնադրման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

Հիմք ընդունելով ձերբակալման օրդերի և այդ առնչությամբ ծագող քրեադատավարական խնդիրները՝ փոփոխություններ և լրացումներ կկատարվեն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում:

Կարևորելով թմրանյութերի ապօրինի շրջանառության և թմրամոլության դեմ պայքարի անհրաժեշտությունը՝ միանգամայն արդարացված է այս բնագավառում նոր մարմնի ստեղծումը: Այդ կապակցությամբ կմշակվի «Թմրանյութերի և թմրամոլության մոնիտորինգի կենտրոնի հիմնադրման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

Ինչպես ներպետական, այնպես էլ միջպետական մակարդակով դատական համագործակցությունը խթանելու համար կմշակվի «Ժամանակավոր դատական համագործակցության միություն ստեղծելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

---

[13] 2001թ. մայիսի 28-ի Խորհրդի որոշում թիվ 2001/427/JHA՝ «Հանցագործությունների կանխման եվրոպական ցանց ստեղծելու մասին»:

[14] 1999թ. ապրիլի 28-ի Հանձնաժողովի որոշում՝ «Խարդախության դեմ եվրոպական գրասենյակի հիմնադրման մասին»:

[15] 2002թ. հունիսի 13-ի Խորհրդի թիվ 2002/584/JHA հիմնարար որոշում՝ «Ձերբակալման եվրոպական օրդերի և անդամ պետությունների միջև հանձնման ընթացակարգերի մասին»:

[16] 1993թ. փետրվարի 8-ի Խորհրդի թիվ 302/93 կանոնակարգ՝ «Թմրանյութերի և թմրամոլության մոնիտորինգի եվրոպական կենտրոնի հիմնադրման մասին»:

[17] 2000թ. դեկտեմբերի 14-ի Խորհրդի որոշում՝ «Պայմանական դատական համագործակցության միություն ստեղծելու մասին»:

1.2.1 Օրենսդրական համապատասխանեցում

0	1	2	3	4	5	6
NN ը/կ	Միջոցառում	ԵՄ իրավական աղբյուր	Պատասխանատու մարմին	Ներկայացման ժամկետ	Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր)	Տեխնիկական աջակցություն
			2006			
1.	« Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում	1999թ. դեկտեմբերի 9-ի «Ահաբեկչական խմբերի ֆինանսավորման դեմ պայքարի բնագավառում համագործակցության մասին» Խորհրդի առաջարկություն (1999/C 373/01)	ՀՀ կենտրոնական բանկ (ՀՀ արդարադատության նախարարության, ՀՀ ազգային անվտանգության ծառայության, ՀՀ ԿԱ ոստիկանության մասնակցությամբ)	4-րդ եռամսյակ	15	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
			ԸՆԴԱՄԵՆԸ		15	
			2007			
2.	« Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	1998թ. դեկտեմբերի 21-ի «Կազմակերպված հանցավորությունը՝ վերջինիս դեմ պայքարի համակողմանի ռազմավարություն հաստատելու միջոցով կանխելու մասին» Խորհրդի բանաձև (98/C 408/01)	ՀՀ արդարադատության նախարարություն (ՀՀ ԿԱ ոստիկանության, ՀՀ ազգային անվտանգության ծառայության մասնակցությամբ)	4-րդ եռամսյակ	21	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
			ԸՆԴԱՄԵՆԸ		21	
			2008			
3.	• ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում	2001թ. մայիսի 28-ի «Վերահսկվող նյութերի նմուշների փոխանցման մասին» Խորհրդի թիվ 2001/419/JHA որոշում	ՀՀ արդարադատության նախարարություն (ՀՀ ԿԱ ոստիկանության, ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայության մասնակցությամբ)	1-ին եռամսյակ	17	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
			ԸՆԴԱՄԵՆԸ		17	
			2009			
4.	ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և	2002թ. հունիսի 13-ի «Ձերբակալման եվրոպական	ՀՀ ԿԱ ոստիկանություն (ՀՀ ազգային	2-րդ եռամսյակ	59	Խորհրդատվություն

	լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում	օրդերի և անդամ պետությունների միջև հանձնման ընթացակարգերի մասին» Խորհրդի թիվ 2002/584/JHA հիմնարար որոշում	անվտանգության ծառայության մասնակցությամբ)			
ԸՆԴԱՄԵՆԸ					59	
ԸՆԴԱՄԵՆԸ					112	

1.2.2 Ինստիտուցիոնալ կարողություններ

0	1	2	3	4
NN ը/կ	Հաստատություն	Վերակազմակերպում	Վերապատրաստման կարիքներ	Տեխնիկական աջակցության կարիքներ
1.	ՀՀ կենտրոնական բանկ (ՀՀ արդարադատության նախարարություն)	-	Փողերի լվացման դեմ պայքարի մասին դասընթաց (10 օր/2006թ.)	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
2.	ՀՀ ԿԱ ոստիկանություն (ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն)	-	Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի ռազմավարության մասին դասընթաց (10 օր/2007թ.)	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
3.	ՀՀ արդարադատության նախարարություն (ՀՀ ԿԱ ոստիկանություն, ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն)	-	Վերահսկվող նյութերի նմուշների փոխանցման մասին դասընթաց (10 օր/2008թ.)	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
4.	ՀՀ արդարադատության նախարարություն (ՀՀ ԿԱ ոստիկանություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն)	-	Անհայտ կամ սեռական շահագործման ենթարկվող երեխաների հայտնաբերման գործում քաղաքացիական հասարակության հասարակության ներդրման մասին դասընթացներ (10 օր/2008թ.)	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
5.	ՀՀ արդարադատության նախարարություն (ՀՀ ԿԱ ազգային անվտանգություն, ՀՀ ԿԱ ոստիկանություն)	• Հանցագործությունների կանխման ցանցի հիմնադրում, • «Հանցագործության կանխման ցանց ստեղծելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	-	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
6.	ՀՀ արդարադատության նախարարություն (ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն, ՀՀ ԿԱ ոստիկանություն)	• Խարդախությունների դեմ պայքարի գրասենյակի հիմնադրում • «Խարդախությունների դեմ պայքարի գրասենյակի հիմնադրման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծիմ մշակում	Խարդախությունների դեմ պայքարի և խարդախությունների դեմ պայքարի գրասենյակի գործունեության մասին դասընթաց (15 օր/2009թ.)	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
7.	ՀՀ արդարադատության նախարարություն (ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն, ՀՀ ոստիկանություն)	-	Ձերբակալման օրդերի և դրա նածնման ընթացակարգերի մասին դասընթացներ (25 օր/2009թ.)	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
8.	ՀՀ արդարադատության նախարարություն (ՀՀ ԿԱ ոստիկանություն , ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն և ՀՀ ԿԱ մաքսային պետական կոմիտե)	• Թմրանյութերի և թմրամոլության մոնիտորինգի կենտրոնի հիմնադրում • « Թմրանյութերի և	Թմրանյութերի և թմրամոլության մոնիտորինգի կենտրոնի գործունեության մասին դասընթացներ (35 օր/2009թ.)	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն

		թմրամոլության մոնիտորինգի կենտրոնի հիմնադրման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում		
9.	ՀՀ արդարադատության նախարարություն (ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայության, ՀՀ ԿԱ ոստիկանություն)	• Ժամանակավոր դատական համագործակցության միության հիմնադրում • «Ժամանակավոր դատական համագործակցության միություն ստեղծելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	Ժամանակավոր դատական համագործակցության միության գործունեության մասին դասընթացներ (15 օր/2009թ.)	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն

1.2.3.Քաղաքականություն

0	1	2	3	4	5	6
NN ը/կ	Միջոցառում	ԵՄ իրավական աղբյուր	Պատասխանատու մարմին	Ներկայացման ժամկետ	Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր)	ԵՄ տեխնիկական աջակցություն
			2008			
1.	«Անհայտ կամ սեռական շահագործման ենթարկվող երեխաների հայտնաբերման գործում քաղաքացիական հասարակության մասնակցության մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	2001թ. «Անհայտ կամ սեռական շահագործման ենթարկվող երեխաների հայտնաբերման գործընթացում քաղաքացիական հասարակության մասնակցության մասին» Խորհրդի թիվ 2001/C283/01 ռեզոլյուցիա	ՀՀ արդարադատության նախարարություն (ՀՀ ԿԱ ոստիկանության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության մասնակցությամբ)	4-րդ եռամսյակ	15	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
ԸՆԴԱՄԵՆԸ					15	

2. Հիմնարար իրավունքներ

Ներածություն

«Հիմնարար իրավունքներ» ենթագլխում ԵՄ օրենսդրությունը կարգավորում է մուտքի արտոնագրի տրամադրման խնդիրները: Այն մասնավորապես միասնական ձևաչափ է սահմանում արտոնագրերի համար, կարգավորում է արտոնագրերի առնչությամբ հյուպատոսական համագործակցությունը, արտասահմանյան ներկայացուցչություններում, արտոնագրերի վարչություններում, ինչպես նաև վիզաների ժամկետի երկարաձգման համար պատասխանատու այլ մարմիններում կեղծ կամ կեղծված փաստաթղթերի բացահայտումը: Այս բնագավառում ԵՄ օրենսդրությունը կարգավորում է նաև սահմանի վրա մուտքի արտոնագրի տրամադրումը: «Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների իրավական կարգավիճակի մասին» ՀՀ օրենքը[18] սահմանում է մուտքի արտոնագրի տեսակները, ժամկետները, տրամադրման կարգը և մերժումը: «Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների իրավական վիճակի մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ կառավարության որոշումը[19] սահմանում է մուտքի արտոնագրի տրամադրման կարգը և դրա ժամկետի երկարաձգումը: Թեև ՀՀ օրենսդրությունը նախատեսում է սահմանի վրա մուտքի արտոնագիր տրամադրելը, սակայն լիարժեք չի լուծում համապատասխան ընթացակարգերի սահմանման և դրանց իրականացման հետ կապված հարցերը:

ԵՄ օրենսդրությունը կարգավորում է նաև երրորդ երկրների քաղաքացիներին երկարաժամկետ բնակության թույլտվություն տրամադրելը, վերջիններիս երկարաժամկետ բնակության հետ կապված խնդիրները, նրանց վտարման վերաբերյալ վճիռների փոխադարձ ճանաչումը, անօրինական մուտքի կամ բնակության հետ առնչվող իրավահարաբերությունները: Օրենսդրորեն կարգավորվում է նաև տեղահանված անձանց ժամանակավոր պաշտպանությունը: Ի տարբերություն ԵՄ օրենսդրության, որը նախատեսում է մեկ հասկացություն՝ «ապաստան», ՀՀ օրենսդրությամբ («Փախստականների մասին»[20] և «Քաղաքական ապաստանի մասին»[21] ՀՀ օրենքներ) առանձնացվում են փախստականին տրամադրվող «ապաստան» և «քաղաքական ապաստան» հասկացությունները, ուստի այդ առումով այն չի համապատասխանում ԵՄ օրենսդրության պահանջներին: ՀՀ օրենսդրությունը չի նախատեսում տեղահանված անձանց ժամանակավոր պաշտպանության իրավական կարգավորումը:

Այս բնագավառում ԵՄ օրենսդրությունը կարգավորում է նաև ռասիզմի և քսենոֆոբիայի դեմ պայքարը, ինչպես նաև ռասայական կամ էթնիկական հիմքերով խտրականության բացառումը: ՀՀ օրենսդրությունը որև կարգավորում չի տալիս նշված հարցերին, հետևաբար անհրաժեշտ է մշակել համապատասխան իրավական ակտի նախագիծ:

Խորհրդի «Մուտքի արտոնագրերի համար միասնական ֆորմատ սահմանելու մասին» 1995թ. մայիսի 29-ի թիվ 1683/95 կանոնակարգի, Խորհրդի «Երրորդ երկրների քաղաքացիների ընդունման առնչությամբ ընդունված փաստաթղթերի կիրարկման մոնիտորինգի մասին» 1995թ. դեկտեմբերի 22-ի թիվ 96/C 11/01 որոշման, Խորհրդի «Երրորդ երկրների քաղաքացիների կամավոր վերադարձին ուղղված աջակցության հետ կապված տեղեկությունների փոխանակման մասին» 1997թ. մայիսի 26-ի թիվ 97/340 որոշման և Խորհրդի «Դուբլինի կոնվենցիայի արդյունավետ կիրառման նպատակով մատնահետքերի համեմատության համար «Եվրոդաքի» հիմնադրման մասին» 2000թ. դեկտեմբերի 11-ի թիվ 2725/2000 կանոնակարգի համապատասխանեցման խնդիրը կդիտարկվի 2008 թվականից հետո:

2007 թվական

Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների բնակության խնդիրները կարգավորելու նպատակով ՀՀ օրենսդրությունը կհամապատասխանեցվի Խորհրդի 2003թ. փետրվարի 27-ի թիվ 415/2003 կանոնակարգին, Խորհրդի 1999թ. ապրիլի 29-ի թիվ 1999/C 140/01 առաջարկությանը, Խորհրդի 2002թ. հունիսի 13-ի թիվ 1030/2002 կանոնակարգին, ինչպես նաև Խորհրդի 2003թ. նոյեմբերի 25-ի թիվ 2003/109, 2001թ. մայիսի 28-ի թիվ 2001/40, ինչպես նաև 2002թ. նոյեմբերի 28-ի թիվ 2002/90 դիրեկտիվներին[22]:

---

[18] ՀՕ-110, 17.06.2004թ.:
[19] Թիվ 459, 23.09.1994թ.:
[20] ՀՕ-288, 03.03.1999թ.:
[21] ՀՕ-229, 26.09.2001թ.:
[22] 2003թ. փետրվարի 27-ի Խորհրդի կանոնակարգ թիվ 415/2003՝ «Սահմանի վրա մուտքի արտոնագրի տրամադրման, այդ թվում՝ տրանզիտային ծովագնացներին մուտքի արտոնագրերի տրամադրման մասին», 1999թ. ապրիլի 29-ի Խորհրդի առաջարկություն թիվ 1999/C 140/01՝ «Արտասահմանյան ներկայացուցչություններում, վիզաների դեպարտամենտում և վիզաների տրամադրման կամ երկարաձգման հետ առնչվող տեղական մարմինների գրասենյակներում կեղծ կամ կեղծված

ՀՀ տարածքում օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց համար բնակության թույլտվության իրավական ինստիտուտը, դրան ներկայացվող պահանջները, Հայաստանում երկարաժամկետ բնակություն հաստատած օտարերկրյա քաղաքացիների կարգավիճակը, վտարման կարգն օրենսդրորեն սահմանելու նպատակով, ինչպես նաև ՀՀ սահմանի վրա օտարերկրյա քաղաքացիներին մուտքի արտոնագրի տրամադրման կարգը սահմանելու և մուտքի արտոնագրի տրամադրման կամ արդեն իսկ տրամադրված արտոնագրի ժամկետի երկարաձգման ընթացքում կեղծված փաստաթղթերի բացահայտումն ապահովելու համար կմշակվի «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենք և փոփոխություններ և լրացումներ կկատարվեն ՀՀ կառավարության 1994 թվականի սեպտեմբերի 23-ի թիվ 459 որոշման մեջ:

Օտարերկրյա քաղաքացիների անօրինական մուտքի, բնակության, ինչպես նաև վտարմանն առնչվող օրենսդրական դրույթները ԵՄ օրենսդրական պահանջներին համապատասխանեցնելու նպատակով փոփոխություններ և լրացումներ կկատարվեն Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում:

Մուտքի արտոնագրի և ապաստանի տրամադրման առնչությամբ ծագող իրավահարաբերությունները կարգավորող օրենսդրության հետագա զարգացման համար համապատասխանեցման ենթակա են Խորհրդի 2003թ. հունվարի 27-ի թիվ 2003/9 դիրեկտիվը, Խորհրդի 1995թ. հունիսի 20-ի ռեզոլյուցիան և Խորհրդի 2001թ. հուլիսի 20-ի թիվ 2001/55 դիրեկտիվը[23]:

Ապաստան հայցողների ընդունելության նվազագույն ստանդարտները և ապաստանի տրամադրման ընթացակարգերի նվազագույն երաշխիքներ սահմանելու նպատակով կմշակվի «Ապաստանի մասին» ՀՀ օրենքի նախագիծ:

2008 թվական

Կմշակվի «Տեղահանված անձանց զանգվածային ներհոսքի դեպքում ժամանակավոր պաշտպանություն տրամադրելու նվազագույն երաշխիքների մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

Ելնելով ռասիզմի և քսենոֆոբիայի դեմ կանոնակարգված պայքար իրականացնելու անհրաժեշտությունից՝ 1997թ. հունիսի 2-ի «Ռասիզմի և քսենոֆոբիայի մոնիտորինգի եվրոպական կենտրոնի հիմնադրման մասին» թիվ 1035/97 Խորհրդի կանոնակարգի հիման վրա լրացումներ կկատարվեն «Ոստիկանության մասին» օրենքում, ինչպես նաև կմշակվի «Ռասիզմի և քսենոֆոբիայի կենտրոն ստեղծելու և կենտրոնի կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

2009 թվական

Խտրականության բացառման սկզբունքը մանրամասնորեն սահմանելու և այն իրականում գործադրելու նպատակով ՀՀ օրենսդրությունը կհամապատասխանեցվի Խորհրդի 2000թ. հունիսի 29-ի թիվ 2000/43 դիրեկտիվին[24]:

Կմշակվի «Ռասայական և էթնիկական հիմքունքներով խտրականության բացառման սկզբունքները ճանաչելու մասին» օրենքի նախագիծ՝ խտրականության նշված տեսակների բացառման սկզբունքը մանրամասնորեն սահմանելու և դրա պաշտպանությունը կանոնակարգելու նպատակով:

փաստաթղթերի բացահայտումն ապահովելու մասին», 2002թ. հունիսի 13-ի Խորհրդի կանոնակարգ թիվ 1030/2002՝ «Երրորդ երկրների քաղաքացիների համար բնակության թույլտվության միասնական ֆորմատ սահմանելու մասին», 2003թ. նոյեմբերի 25-ի Խորհրդի դիրեկտիվ թիվ 2003/109՝ «Երկարաժամկետ բնակություն ունեցող երրորդ երկրների քաղաքացիների կարգավիճակի մասին», 2001թ. մայիսի 28-ի Խորհրդի դիրեկտիվ թիվ 2001/40՝ «Երրորդ երկրների քաղաքացիների վտարման վերաբերյալ վճիռների երկկողմանի ճանաչման մասին», 2002թ. նոյեմբերի 28-ի Խորհրդի դիրեկտիվ թիվ 2002/90՝ «Անթույլատրելի մուտքի, տրանզիտի և բնակության հետ կապված միջոցների սահմանման մասին»:

[23] 2003թ. հունվարի 27-ի Խորհրդի դիրեկտիվ թիվ 2003/9՝ «Ապաստան հայցողների ընդունելության համար նվազագույն ստանդարտների սահմանման մասին», 1995թ. հունիսի 20-ի Խորհրդի ռեզոլյուցիա՝ «Ապաստանի հետ կապված ընթացակարգերի համար նվազագույն երաշխիքների մասին», 2001թ. հուլիսի 20-ի Խորհրդի դիրեկտիվ թիվ 2001/55՝ «Տեղահանված անձանց զանգվածային ներհոսքի դեպքում ժամանակավոր պաշտպանություն տրամադրելու նվազագույն ստանդարտների և անդամ պետությունների միջև այդ անձանց ընդունելությանն ու դրա հետևանքները հաղթահարելուն ուղղված միջոցառումների հավասար բաշխման մասին»:

[24] 2000թ. հունիսի 29-ի Խորհրդի դիրեկտիվ թիվ 2000/43՝ «Ռասայական և էթնիկական ծագման հիմքերի վրա հավասար վերաբերմունքի սկզբունքն իրականացնելու մասին»:

2.1. Օրենսդրական համապատասխանեցում

0	1	2	3	4	5	6
NN ը/կ	Միջոցառում	ԵՄ իրավական աղբյուր	Պատասխանատու մարմին	Ներկայացման ժամկետ	Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր)	Տեխնիկական աջակցություն
			2007			
1.	• «Օտարերկրյացիների մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում • ՀՀ կառավարության 1994 թվականի սեպտեմբերի 23-ի թիվ 459 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին կառավարության որոշման նախագծի մշակում	2002թ. հունիսի 13-ի «Երրորդ երկրների քաղաքացիների համար բնակության թույլտվության միասնական ֆորմատ սահմանելու մասին» Խորհրդի թիվ 1030/2002 կանոնակարգ 2003թ. նոյեմբերի 25-ի «Երկարաժամկետ բնակություն ունեցող երրորդ երկրների քաղաքացիների կարգավիճակի մասին» Խորհրդի թիվ 2003/109 դիրեկտիվ 2001թ. մայիսի 28-ի «Երրորդ երկրների քաղաքացիների վտարման վերաբերյալ վճիռների երկկողմանի ճանաչման մասին» Խորհրդի թիվ 2001/40 դիրեկտիվ 2003թ. փետրվարի 27-ի «Սահմանի վրա մուտքի արտոնագրի տրամադրման, այդ թվում տրանզիտային ծովագնացներին մուտքի արտոնագրերի տրամադրման մասին» Խորհրդի թիվ 415/2003 կանոնակարգ	ՀՀ արտաքին գործերի նախարարություն (ՀՀ արդարադատության, ՀՀ ԿԱ ոստիկանության, մասնակցությամբ)	1-ին եռամսյակ	104	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն

		1999թ. ապրիլի 29-ի «Արտասահմանյան ներայացուցչություններում վիզաների դեպարտամենտում և վիզաների տրամադրման կամ երկարաձգման հետ առնչվող տեղական մարմինների գրասենյակներում կեղծ կամ կեղծված փաստաթղթերի բացահայտումն ապահովելու մասին» Խորհրդի թիվ 1999/C 140/01 առաջարկություն				
2.	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքում» փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում	2002թ. նոյեմբերի 28-ի «Անթույլատրելի մուտքի, տրանզիտի և բնակության հետ կապված միջոցների սահմանման մասին» Խորհրդի թիվ 2002/90 դիրեկտիվ	ՀՀ արդարադատության նախարարություն (ՀՀ արտաքին գործերի նախարարության, ՀՀ ԿԱ ոստիկանության մասնակցությամբ)	1-ին եռամսյակ	15	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
3.	«Ապաստանի մասին» օրենքի նախագծի մշակում	2003թ. հունվարի 27-ի «Ապաստան հայցողների ընդունելության համար նվազագույն ստանդարտների սահմանման մասին» Խորհրդի թիվ 2003/9 դիրեկտիվ 1995թ. հունիսի 20-ի «Ապաստանի հետ կապված ընթացակարգերի համար նվազագույն երաշխիքների մասին» Խորհրդի ռեզոլյուցիա	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն (ՀՀ արդարադատության նախարարության, ՀՀ արտաքին գործերի նախարարության մասնակցությամբ)	2-րդ եռամսյակ	57	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
ԸՆԴԱՄԵՆԸ					**176**	
2008						
4.	«Տեղահանված անձանց զանգվածայյին ներհոսքի դեպքում ժամանակավոր պաշտպանություն տրամադրելու	2001թ. հուլիսի 20-ի «Տեղահանված անձանց զանգվածային ներհոսքի	ՀՀ արտաքին գործերի նախարարություն (ՀՀ արդարադատության	2-րդ եռամսյակ	41	Խերհրդատվություն

	նվազագույն երաշխիքների մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ	դեպքում ժամանակավոր պաշտպանություն տրմադրելու նվազագույն ստանդարտների և անդամ պետությունների միջև այդ անձանց ընդունելությանն ու դրա հետևանքներն հաղթահարելուն ուղղված միջոցառումների հավասար բաշխման մասին» Խորհրդի թիվ 2001/55 դիրեկտիվ	նախարարության մասնակցությամբ)			
5.	• «Ոստիկանության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում • «Ռասիզմի և քսենոֆոբիայի կենտրոն ստեղծելու և կենտրոնի կանոնադրությունը հաստատելու մասին» կառավարության որոշման նախագիծ	1997թ. հունիսի 2-ի «Ռասիզմի և քսենոֆոբիայի մոնիտորինգի եվրոպական կենտրոնի հիմնադրման մասին» Խորհրդի թիվ 1035/97 կանոնակարգ	ՀՀ արդարադատության նախարարություն (ՀՀ ԿԱ ոստիկանության և ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայության մասնակցությամբ)	4-րդ եռամսյակ	34	Նախնական փորձաքննություն
ԸՆԴԱՄԵՆԸ					**75**	
2009						
6.	«Ռասայական և էթնիկական հիմքունքներով խտրականության բացառման սզբունքները ճանաչելու մասին» օրենքի նախագծի մշակում	2000թ. հունիսի 29-ի «Ռասայական և էթնիկական ծագման հիմքերի վրա հավասար վերաբերմունքի սկզբունքն իրականացնելու մասին» Խորհրդի թիվ 2000/43 դիրեկտիվ	ՀՀ արդարադատության նախարարություն	1-ին եռամսյակ	17	Նախնական փորձաքննություն
ԸՆԴԱՄԵՆԸ					**17**	
ԸՆԴԱՄԵՆԸ					**268**	

2.2. Ինստիտուցիոնալ կարողություններ

0	1	2	3	4
NN p/կ	Հաստատություն	Վերակազմակերպում	Վերապատրաստման կարիքներ	Տեխնիկական աջակցության կարիքներ
1.	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն	-	Ապստան տրամադրելու և միգրացիայի վերաբերյալ դասընթաց (5 օր/2007թ.)	Խորհրդատվություն
2.	ՀՀ արտաքին գործերի նախարարություն ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ ԿԱ ոստիկանության	-	Հիմնարար իրավունքների և խտրականության բացառման վերաբերյալ դասընթաց, (5 օր/2007թ.)	Խորհրդատվություն
3.	ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ ԿԱ ոստիկանություն ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն	«Ռասիզմի և քսենոֆոբիայի կենտրոն» պետական ոչ առևտրային կենտրոնի հիմնադրում	-	Խորհրդատվություն